

Հայոց լեզուն հազարազանձ...

Մեր լեզուն մեր խիղճն է դա,

Սուրբ հացը մեր սեղանի,

Մեր հոգու կանչն է արդար

Ու համը մեր բերանի...

Յուրաքանչյուր հայիս գոյությունն ու ինքնությունը սկսվում է լեզվից, ու մեր ականջին հնչած առաջին մեղեդիների հետ ծնվում է հայոց լեզուն հազարազանձ, մեր ոսկեդենիկը, որում միտքն անսահման ազատ է, ու հոգին՝ անեզր: Այդ անսահմանի ու անեզրի մեջ էլ ապրում է հայի ոգին: Վսեմ են հայի ոգին, էությունն ու նվիրվածությունը, և հայ լեզուն մշտանորոգ ու կանգուն պահելը ավելի է վսեմացնում նրա ինքնությունը, մաքրում խիղճը: Իսկ մեր խիղճը մեր լեզուն է, մեր մաքրությունն ամենից առաջ: Եվ սրբությունը: Քիչ սրբություններ չունի մարդ արարածը, բայց սրբության սրբոցը նա դարձրել է մայրենին, դարձրել է ոչ միայն հացը իր սեղանի, այլև այն նշխարը, որ գորացնում է, պարզում աստվածայինը, ու գոյատևել, երբեմն, ավելի շատ լեզվով, քան հանապազօրյա հացով: Մարմնական ուժի դեմ՝ հոգու զորություն, ահռելի բազկի դեմ՝ հուժկու կամք, համընդհանրության դեմ՝ վառ ինքնություն, ու ծնվեց արդար կանչը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...»: Ու հազարազանձը դարձավ աստծո հետ խոսելու, աղոթքի լեզու, դարձավ երաժշտություն, պերճություն, ուժ, ճկունություն ու... համը մեր բերանի:

Մեր լեզուն ծուխն է մեր տան,

Մեր կշիռն աշխարհի մեջ,

Նա աղն է մեր ինքնության,

Էության խորհուրդը մեր...

Դարերի խորքից սկիզբ առած ու հավերժության ձգտող լեզուն օջախի ծուխն է ամբողջ աշխարհով սփռված հայության համար, այն ջերմ օջախի, որ իմաստավորում է կարոտը, ապրեցնում հեռվում: Եվ չնայած այդ սփռվածությանը՝ մեկն է հայի հոգին, նրա ազգային կերպարանքը, նրա մշակույթը: Իսկ հայրենիքը նախևառաջ լեզուն է՝ ինքնարտահայտող ու չփոխակերպվող: Ժամանակի քառսում ինքնաճանաչումը, հույսն ու հավատն էին շարունակության երաշխիքը, որ եղավ շնորհիվ Մաշտոցի: «Լինե՞լ, թե չլինե՞լ» հարցին միանշանակ «Լինե՛լ» ասելով՝ Մաշտոցն անասելի երկբայությունը դարձրեց հաստատակամություն ու դարձավ աղը մեր ինքնության: Ունեցանք մեծ հավատ, հզոր մշակույթ, որ հային հայ պահեցին աշխարհում, տվեցին

ուժ ու իրավունք նոր քաղաքակրթությունների ու ինքնդրսևորման պայքարում՝ մեր տեղը հաստատելով արևի տակ:

Մեր լեզուն արյունն է մեր,

Արյունից ավելի թանկ,

Մեր բուրմունքն ու գույնն է մեր,

Մեր լեզուն մենք ենք, որ կանք...

Իր ազատության համար պայքարող ժողովուրդը, լեզուն անառիկ պահելով, այն գորեղ բանալին է ձեռք բերում, որ դեպի բաղձալի ազատությունն է տանում: Մեր լինելիության հիմքը, մեր հաղթանակների ու հզոր կամքի գաղտնիքն էլ մեր հազարագանձն ու ոսկեդենիկն է, որը մեծագույն հարստություն կարող է համարվել ամեն մի ազգի համար: Ինչպես եկեղեցու շէնքն է պատմական հուշարձանից վերածվում կենդանի ու ապրող տաճարի, երբ մենք այն լցնում ենք աղոթքով ու շարականով, այնպես էլ լեզուն է ապրում, երբ շունչ ու հոգի ենք տալիս նրան մեր խոսքում, մտքերում ու մեր գործերում: Երբ Նարեկացու «Մատյանն» է գրվել հայերեն, թվում է, թե եկեղեցիների զանգերը հայերեն են դողանջում:

Նա պիտի մեր առաջին

Ու վերջին սերը լինի,

Ի՞նչ ունենք էլ աշխարհում,

Որ այսքան մերը լինի...

Մենք հայ ենք, ադամանդի պես խտացված՝ մեր հայրենիքը, հայոց լեզուն, ու որքան անաղարտ է մեր լեզուն այնքան լուսավոր կլինի երկիրը: Այդ լույսի համար շարունակական է մեր պայքարը, պայքար, որ մարդ արարածը սկսել է հենց իր լինելիության սկզբից: Այդ պայքարից ծնվում են ստեղծարար ուժն ու մեծ ազատությունը, որով հնարավոր է նվաճել աննվաճելին: Ու քանի դեռ հայ մանուկի շուրթերից հնչում է հայերեն այբ-բեն-գիմ-ը, մի ողջ ժողովրդի սկիզբն ու շարունակությունը կդառնան հավերժ ընթացք: